ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 133- Ա **28 հունիսի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 43-Ա կարգադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» N 105-Ա, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 44-Ա կարգադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» N 106-Ա, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի N 68-Ա կարգադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» N 107-Ա, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 9-ի N 36-Ա կարգադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» N 108-Ա, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի հուլիսի 30-ի N 26-Ա կարգադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 109-Ա և մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 40-Ա կարգադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» N 110-Ա կարգադրությունների մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ կարգադրությունների նախաբանում

1) «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի» բառերը փոխարինել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի» բառերով.

2) «Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով» բառերը փոխարինել «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով» բառերով:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ք. Գավառ